

ՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ՝ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵՍՆ

(Հայ Ֆարարի, Ստանֆերի, Մաւելի և այլոց)

Ստ. Պատ.

Պատերը, ըստ օրինի, պիտի սկսուէր անշուշտ նիսանի 15-ին, որ տօնում էին եօթն օր։ Պէնտէկոստէն—յիսներորդ օրը, նիսանի 16-ից յետոյց եթէ ոյդ (նիսան) ու հետեւալ իսր ամիսները նահանջ դուրս գային, այն ժամանակ պէնտէկոստէն կը հանդիպէր սիվան ամսի 7-ին, եթէ երկուան էլ ամբողջ դուրս գային—5-ին, եթէ մէկն ամբողջ իսկ միւսը պակաս—6-ին։ Յայտնի է, որ այդ ամենը կախուած է պատահականութիւնից, որից առաջ կը դայ մի սաստիկ խճճուած դրութիւն, ժամանակի հաշուագիւտն անելն համարեա անհնարին դարձնող։ Աւելացնենք և այն, որ օրը (գիշեր—ցերեկ) բաժանում էր, ինչպէս և այժմ, 24 ժամերի։ Գիշերը բաժանում էր չորս մասի, ա) 6-ից մինչև 9 ժամը—երեկոյ, թ) 9-ից մինչև 12—մէջգիշէր, գ) կէսգիշերից մինչև 3—հաւախօս, դ) 3-ից մինչև 6—առաւօտ, այզ։ Մեր երեկոյեան եօթներորդ ժամը համարւում էր գիշերուայ առաջին ժամ, առաւօտեան եօթներորդ ժամը—ցերեկուայ առաջին ժամ, առաւօտեան իներորդ ժամը—երրորդ։ «Էր ժամ եըրորդ եւ նաևն զնա ի իսաշ» (Մարկ. ԺԵ, 20)։ Կէսօրը—վեցերորդ ժամ։ «... վեց ժամ եղի, խաւար կալաւ զամենայն երկիր մինչև ցինն ժամ» (Մարկ. ԺԵ, 32), այսինքն մինչև ժամի երեքը՝ կէսօրից յետոյ։

Ի նկատի ունենալով, որ Յովհաննէս աւետարանիցը միւսներից աւելի կանգ առնում է Յիսուսի կենաց վերջին տարիների վրայ ու աւելի ճշտապահութեան հետեւմ անցքերը դասաւորելիս, հետազօտողները, նրա ընարանների հիման վրայ, գալիս են այն եղբակացութեան, որ նրա հոգու աւանդման ժամանակի որոշելը աւելի հեշտ է

ներկայանում, քան միւս անցքերինը, և դա կարող է ծառայել իբրև կեդրոն՝ այս վերջինների ժամանակը ճշտիւ որոշելու համար:

Երեք աւետարանիչների խօսքերից հետեւում է, որ Յիսուս խաչուել է իսկ և իսկ պասերի օրը, ըստ Յովհաննէս աւետարանշի սակայն—գրա նախորդ օրը, «իսկ հրէս այքն, քանզի ուրբաթ էր, զի մի անդէն ի խաչին ագանիցին մարմինքն մինչև ցշաբաթն...» (ԺԹ. 31) հետեւաբար, քանի որ, ինչպէս մենք դիտենք, պասերը տօնեւում էր նիսան ամսի 14-ին կամ 15-ին, ուրեմն Յիսուսի երկրաւոր կեանքի վախճանի ամսաթիւն է նիսանի կամ 14-ը կամ 15-ը, եթէ չորս աւետարանիչները միակերպ չեն հաստատում այդ անցքը, բայց նրանք բոլորը գոնէ միաձայն հռչակում են, որ խաչելութիւնը կատարուել է ուրբաթ օրը, իսկ յարութիւնը—երրորդ օրը (շաբաթուայ առաջին օրը, ըստ մեզ կիւրակէ օրը, որն սկսուում է նախորդ շաբաթ օրուայ երեկոյեան ժամի 7-ից յետոյ) Ուրեմն նրա վախճանը եղել է նիսանի 14 կամ 15-ին, սակայն անկասկած ուրբաթ օրը:

Այն շրջանի երկար տարիների պարբերական ընթացքում (աստղագիտական ստոյգ թուահամարի վրայ հիմնուած) այդ թուերի ուրբաթ օրն եկած տարիներից կարելի է կանգ առնել մեր (քրիստ.) տօմարի 30 կամ 33-ում: Վերցնելով այսպիսի մի ուրբաթ 30 թուականից առաջ, մենք հարկադրուած պիտի ինէինք եղրափակելու, որ Յիսուս խաչուած է եղել իւր քսան տարեկան հասակում, իսկ 33 թուականից յետոյ մենք այնքան հեռացած կը լինէինք, որ խաչելութիւնը պատահած պիտի ենթադրէինք նրա քառասնամեայ հասակին: Ուրեմն տարիներից հաստատագոյնը պէտք է ընդունել 30 կամ 34-րդը: Եթէ XX-րդ դարի օրացոյցը վերածելու լինենք այն ժամանակին, կը տեսնենք, որ Յիսուսի մահուան պատիժը գալիս է 3-րդ տարուայ ապրիլի 7-ին, ուրբաթ օրը ն. տ., իսկ 33-րդ տարուայ՝ ապրիլի 3-ին, նոյնպէս ուրբաթ օրը՝ Հետապննին մտքերն աւելի առաջ գնալով, աշխատում

են որոշել, թէ այդ երկու թուերից որն աւելի մօտ է ճշմարտութեան։

Յովհաննէս աւետարանիչը (Բ. 20) կրկնում է հրէաների ասածը. «Զքառասուն եւ զվեց ամ շինեցաւ տաճար»։ Ինչպէս յայտնի է, տաճարի շինութիւնը աւարտուել էր դրանից մի քանի տարով միայն առաջ, հետեաբար այդ խօսքերը պէտք է հասկանալ այսպէս, իբր շինութիւնը սկսուել էր սրանից 46 տարի առաջ։ Ըստ վկայութեան Յովհաննէփ Փլաւիսոփ՝ այդ շինութիւնն սկսել էր Հերովդէս, իւր թագաւորութեան տասնութերորդ տարում։ Խակ նա թագաւորել սկսեց Հռովմի սկզբնաւորութեան 717 թօւականի գարնանը (37 թ. ձ. ա.)։ Ուրեմն նրա թագաւորութեան 18-րդ տարին սկսուել է 734 և վերջացել 735 թուականին (19-րդ թ. թ. ձ. ա.)։ Աւելացնելով դրա վրայ 46 տարի, կտանանք 781 թուականը (28-րդ թ. թ. ձ. յ.)։ որ զուգահաւասարւում է Յիսուսի քարոզչական դործունէութեան սկզբին ու հրէական առաջին պասերի տարուն, երբ նա «գնաց երուսաղէմ եւ տեսաւ, որ աւաճարի մէջ ծախում էին ...» (Բ. 13, 14)։ Այնուհետեւ Յիսուսի երկրորդ անգամ պասերի տօնին գնալը յիշում է նոյն աւետարանիչը (Զ. 4), որից հետեւում է, որ անցքի ժամանակն է մեր տօմարի 20-րդ տարին, և վերջապէս Յիսուսի գնացած երրորդ պասերը, որ կրկին յիշում է Յովհաննէս աւետարանիչը (ԺԳ. 1), տեղի ունեցաւ 30-րդ տարում, որ հանդիպում է, ճշմարտութեան աւելի մօտ ընդունուած, վերոյիշեալ երկու թուականներից մէկում (30 կամ 33)։

Միւնոյն եղբակացութեան ենք գալիս, երբ համեմատում ենք ի՞ն գլ. 1 համարը Ղուկասու Գ. գ.ի հետ. «Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրև երեսնից, սկսեալ որոց որպէս կարծիւր ...»։ Ե՞րբ. Դրան պատասխանում է համ. 1-ը. ի հսկետասաներորդի ամի տէրովթեան Տիբերեայ Կեսարեայ, ի ղատաւորութեան Հրէաստանի Պիղատոսի Պոնտացւոյ ...։ Ահա այդ 15-րդ տարին էր Հռովմայ 781 թուականը կամ մեր տօմարի 28-րդ տարին։ Խակ Պիղա-

տոսի փոխարքայութիւնը շարունակուեց 26-ից մինչև 36 թուականը:

Այս ամենն ապացուցանում են, որ սոյն անցքերն հետադօտող ու գասաւորող աստուածաբանները գնում են ուզիղ ու ճշմարիտ ճանապարհով:

Քրիստոսի ծննդեան տարին ևս առայժմ որոշում է մօտաւորապէս: Եթէ ըստ Ղուկասու, «Յիսուս էր ամաց իրեւ երեսնից...» քրիստոնէական տօմարի 28-րդ տարում, ուրեմն Նրա ծնունդը պիտի լինէր մեր տարեգրութիւնից մօտաւորապէս երկու տարի առաջ, այսինքն՝ Հռովմի հիմնարկութեան 751-րդ տարում: Դարձեալ, թէ ըստ Մատթէոս—Ղուկաս աւետարանիչների և թէ ըստ Տալմուդի, Քրիստոսի ծնունդը գալիս է Հերովդէս Մեծի թագաւորութեան վերջին տարիներին: Ժամանակակից պատմաբան Յովսէփ Փլաւիսը, ցաւալի է, որ Հերովդէսի մահը վերագրում է երբեմն 756, երբեմն 752 և մինչև անգամ 753 թուականներին: Նվորթութիւնը մեծանում է, բայց գիտնականների մեծամասնութիւնը, եղած փաստերի վրայ հիմնուելով, Հերովդէսի մահը վերագրում է այդ թուականներից առաջնոյն:

Ասորոց Կիւրենոս Սուղպիցիոսի դատաւորութեան միջոցին կատարուած ընդհանուր աշխարհագրութեան (մարդահամարի) ժամանակը, որի մասին գրում է Ղուկաս աւետարանիչը, նոյնպէս դժուարութիւններ է ներկայացնում Փրկչի ծննդեան տարին ճշտիւ որոշելու համար: Գործք Առաքելոցի (Ե, 37) ու Յովսէփ Փլաւիսի գրուածքներից հետեւում է, որ այդ մարդահամարը տեղի ունեցել է 760 թուին: Աւետարանիչը թէպէտ անուանում է այդ առաջին աշխարհագիր՝ Կիւրենայ դատաւորութեան ժամանակ (Ղուկ. Բ, 2), սակայն ենթագրում են, որ Կիւրինոսն այդ պաշտօնով երկու անգամ՝ եղել է Ասորիքում, առաջին անգամ մերձաւորապէս 750—752 թուերին: Ղուկասու յիշած մարդահամարը կարող էր առաջինը լինել ժամանակի այդ շրջանում: Հետեաբար, Փրկչի ծնունդը, ամենայն հաւանականութեամբ կարելի է տալ 749 կամ 750 թուերին,

իսկ գրանից արդէն հետեւում է այն, որ Յիսուսի ծնունդը եղել է մեր տարեգրութեան սկզբից երեք - չորս տարով առաջ և խաչուել է երեսուներեք տարեկան հասակին:

Այդ փաստերի հիման վրայ էլ որոշում է մօտաւորապէս՝ աւետարանական միւս անցքերի ժամանակը: Յիսուսի մարդկութեան արած փրկագործ ծառայութիւնը շարունակուեց մօտ երկու և կէս տարի, — 27-րդ տարու վերջից մինչև 30-րդ տարու ապրիլ ամիսը: Աւետարանի շատ տեղերում հերթում է ոմանց այն կարծիքը, իրը թէ այդ միջոցը սահմանափակում է մի տարով միայն, — Յովհաննէս աւետարանչի վկայութիւնից պարզ երեւմ է, որ Յիսուս յաջորդաբար երեք անգամ երուսաղէմում ներկայ գտնուեց հրէից գատկական տօներին:

Ուրեմն, աւետարանական անցքերի ժամանակագրութիւնը, համարեա անկասկած, ներկայանում է հետեւեալ կարգով: Հոռվմի Ճիմնարկութեան 749 կամ 750-րդ տարում Բեթղէհէմի մէջ ծնում է Յիսուս. Ինչուա — Յեռու հրէարէն, Դյօսօն օ Լատարանօ — ըստ աւետարանի, Խարբի Յիսուս նազարեցի, ինչպէս վերջերն անուանում էին Նրան աշակերտները: Հերովդէս Մեծը մեռնում է գրանից մի ամիս վերջը՝ համաձայն մի շարք աղքիւրների, ըստ ոմանց — երեք տարուց յետոյք Մանուկ Յիսուսն ապրում է Նազարէթում: Իւր ծնողների մօտ, Նա արդէն իննը տարեկան է, երբ Արքեղայոսին գահընկէց են անում: ու նրա տեղը Հրէաստանում՝ արտօնեալ կառավարիչներ նշանակում: Առաջին կառավարչապետ Կոպոնիսոսի օրով տասներկու տարեկան Յիսուսն առաջին անգամ՝ յայտնուած է երուսաղէմի տաճարում:

Հոռվմի Ճիմնարկութեան 781-րդ թուականը կամ մեր տօմարի 28-րդ տարին համարեւում է Նրա ուսուցչական գործունէութեան սկիզբը: 27-րդ տարու վերջերին և կամ 28-րդ տարու առաջին ամիսներին պէտք է վերագրել Մկրտութիւնը, քառասնօրեայ ծոմապահութիւնն ու փորձութիւնը և Գալիլիացոց Կանա քաղաքում արած առաջին հրաշագործութիւնը: Մի կարճ ժամանակ կափառ-

նառում մնալուց յետոյ, Յիսուս ուղղում է գեղի Երուսաղէմ՝ 781 թ. զատկի տօնին։ Այս անդամուայ այցելութեանն է վերաբերում—տաճարի մէջ առետուր անողներին խարապանով հալածելին ու նիկողիմոսի հետ ունեցած Գիշերային խօսակցութիւնը։ Գարնանը նա վերադառնում է Գալիլիա և ապրում է Նազարէթում։ Ամառուայ վերջին, հաւանական է սեպտեմբերին, նա նորից յայտնում է Հրէաստանում։ Տաղաւարահարաց տօնին։ Յուսկ ապա, գեկտեմբերի մէջ, դարձեալ ուղղում է գեղի Գալիլիա։ Սամարիոյ վրայով, Ակնյայտնի է, որ «Յակովբայ ջրհորի» մօտ սամարացի կնոջ հետ ունեցած խօսակցութիւնը եղել է ձմեռ-ժոմանակ. «Թերես դուք այն էլ կասէք, որ չորս ամսից յետոյ հունձի ժամանակը կսկսի», իսկ հունձը սովորաբար հասնում էր տպրիլի վերջին։ Նազարէթ վերադառնալուց յետոյ նրա երկնառաք դործունէութեան մէջ սկսում է տիրել մի տեսակ հանդարտութիւն։ Նա սկսում է պարապել տնային դործերով իւր մերձաւորների շրջանում։ Հետեւեալ (782) տարուայ մարտ ամսին Յիսուս ներկայ է սուրբ քաղաքում Պուրիմի տօնին (14—15 ադար)։ Այդ տարում Պուրիմի տօնը պիտի գար հինգշաբթի 17-ին, կամ ուրբաթ 18-ին, եթէ նախընթաց ամսուը սկակաս էր, և կամ, ուրբաթ 18-ին, շաբաթ 19-ին, եթէ նա ամքողջ էր։ Բեթեղդայում անդամալյջի բժշկութիւնը կատարուած է շաբաթ օրը, մարտի 19-ին։ Վերադառնալով Գալիլիա, նա թողնում է Նազարէթը և տեղափոխում է Կափառնաում մեծ քաղաքը, որ փռուած էր Տիբերական ծովի հիւսիսարևմտեան ափում, եղիստոսուից Ասորիք գնացող կարաւանների ճանապարհի վրայ։ Նազարէթից Կափառնաում գնալու համար ութիննը ժամուայ մի ուղղաձիգ ճանապարհ կար, բայց Յիսուս ուղևորում է Մագդաղէի վրայով, որ ընկնում է մի քիչ հարաւ, ծովի արևմտեան ափում։ Գիշերն այստեղ անցկացնելով, նա, վաղ-առաւօտեան ճանապարհ է ընկնում Բեթսայիդայի վրայով գեղի Կափառնաում։ Ճանապարհին, ծովեղերքում, նա կանչում է իւր մօտ Սիմոնին ու Անդրէասին, սրանցից մի քիչ հեռու-

Զերեթեայ որդւոց՝ Յակոբին ու Յովհանին, Նազարէթը  
թողնելուց երկու օր վերջը Նա արդէն Կափառնաումի  
սահմաններումն է։ Միւս օրը շաբաթ էր, հետեւաբար Նա-  
զարէթից Նա դուրս եկաւ հինգշաբթի, իսկ ուրբաթ օրը  
կանչեց Սիմոնին ու առաջին աշակերտներին։ Շաբաթ օրը  
քարոզեց Կափառնաումի ժողովրդանոցում։ Այդ միջոցին  
են վերաբերում Սիմոնի զոքանչի բժշկուիլը, այլև զանազան  
ցաւերով տանջւող ուրիշ շատ հիւանդների կատարելապէս  
բժշկուելու գէպքերը (Մարկ. Ա. 30—34, Ղուկ. Գ. 38—41,  
Մատթ. Բ. 14—17։ Հետեւեալ օրը (կիւրակէ) «ընդ այն  
ընդ առաւօտն յարոցեալ ել, եւ զնաց յանապատ տեղի,  
եւ անդ կայր յազօթս» (Մատ. Ա. 35—26), Ամբողջ հե-  
տեւեալ շաբաթը Նա այցելում է Գալիլիայի զանազան  
վայրերը, «ուսուցանելով ի ժողովուողս նոցա եւ քարոզելով  
զաւետառանն» (Մատթ. Դ. 23)։ «Եւ ել համբաւ զնմանէ  
ընդ ամենայն երկիրն ասորոց» (Հմբ. 24)։

Նա շրջապատուած է Իրեն հաւատարիմ մի քանի  
աշակերտներով։ Նփոթւում է Երուսաղէմի իշխանութիւնը՝  
գրանում մի վտանգ նախատեսելով։ Նրան ենթարկում  
են խիստ հսկողութեան։ Մաքսաւորներն սկսում են խոր-  
հըրդակցել գալիլիացի փարիսեցիների հետ, որոնք արդէն  
տեսել էին Նրան ու ճանաչում էին։ Յիսուսին սկսում են  
մեզարել Նրանում, որ իրը թէ Նա խանգարում է մովսի-  
սական օրէնքները։

Եթէ ճիշտ է գիտնական աստուածաբանների այն  
եղբակացութիւնը, որ Ղուկաս աւետարանչի (Զ. 1) «ի շա-  
բաթու երկրորդում առաջնոյն...» ասածը այն շաբաթն է,  
որի վրայ մենք կանգ առինք,— Նա հանդիպում է ապրիլի  
9-ին, ուրեմն նախընթաց շաբաթ օրը ապրիլի 2-ն էր։  
Ապա դրան հետեւում է այն շաբաթը (Եօթնեակը), որն  
ամենանշանաւորն է աշխարհի Փրկչի երկրաւոր կեանքում։  
Երան վրայ աղօթելու հետեւեալ օրը Նա ընտրում է  
տասներկու առաքեալներին (Մարկ. Գ. 13 և հետ.) տալիս է  
ամբողջ ժողովուրդը հիացնող երանութեանց վերաբերեալ  
քարոզը։ Սա պէտք է տեղի ունեցած լինի Կափառնաումի

հիւսիս—արևմուտքում, այնտեղի մշտագալար բլուրների վրայ, և շարօնակուած՝ մի քանի օր, որին պարզապէս վկայում են աւետարանիչների տյս մասին գրածները։ Առաջին անգամ ձնունդ է առնում եկեղեցու հիմնարկութեան գաղափարը, մի եկեղեցու, որի սիները պիտի համարուեն տասներկու առաքեալները։ Դրանից անմիջապէս յետոյ նա սկսում է «շրջել Գալիֆիայի քաղաքներն ու գիւղերը» (Ղուկ. Բ. 1—3)։ Որին ուղեկցում են առաքեալներն ու «կանայք ոմանք, Մարիամ, որ կոչւր մազդադինացի եւ Յովհաննա կին Քուզայ» և ուրիշներ։ առաքեալներին ուղարկում է Աստուծոյ արքայութիւնը քարոզելու (Ղուկ. Բ. 2)։ Ներկայանում են նրան Յովհաննէս Մկրտչի երկու աշակերտները ու հարցնում, «Դու ես, որ զալցն ես, թէ այլում ակնկալցուք» (Մատթ. ԺԱ. 3)։ Շուտով Յիսուս լսում է Յովհաննէս Մկրտչի սպանուիլը, այլ և տեղեկանում է, որ Հերովդէս Անտիպաս (Գալիլ. չորսրդապետը) հրաման է արձակել՝ նրան սաստկապէս հսկելու։ Այնուհետեւ նաևելով ծովի միւս ափը, հեռանում է գեղակի Յուլիայ Բեթսահիգայ սահմանները։ Ժողովուրդը գնում է նրա ետից և ուզում է նրան թագաւոր հրատարակել (թագաւորեցնել)։ Նա պատասխանում է առաքեալներին, որ թողնեն երեն ու վերտուգառնան կափառնայում։ Հետեւ եալ օրը հրեից ժողովարանում նա մի ընդարձակ քարոզ է տալիս կենաց հացի մասին (Յովհան. Զ.)։

Հասնում է վերջապէս այն ըստէն, երբ նրա ուսուցական դործունէութիւնը պիտի գադարէր այնպէս ապշեցնող պարագաների մէջ... ժողովուրդը կարծես փախչում է նրանից, այժմ նա շրջապատուած է տասներկուաներով միայն և զգում է մարտիրոսական անողոք մահուան անխուսափելիութիւնը։ Յիսուս այդ մասին ուղղակի յայտնում է առաքեալների ժողովին ու հեռանում գէպի հիւսիս։ Փիլիպիայն կեսարիա գնալիս ճանապարհին նա երկու հարց է տալիս Պետրոսին, թէ «ի՞նչ կարծիք ունի նրա մասին ժողովուրդը, և ինչ կարծիք ունին առաքեալները»։ Յայս վայր նա քարոզում էր Աստուծոյ արքայութիւնը,

այժմ բացարձակապէս յայտնում է տշակերտներին՝ իրեն ով լինելը։ Գալիլիայում սովորեցնելը դրէթէ անհնարին էր գարձել, պէտք էր խուսափել դլխաւոր կենդլուններից։ Նա հեռանում է գէպի ծիւրոսի և Սիդօնի կողմերը, թէ պէտ իւր նենգաւոր թշնամիների հետ վերջնական հանգիպումն անխուսափելի է, որովհետեւ այս է Հօր կամքը, և նա կրկին վերագառնում է Երուսաղէմ՝ Տաղաւարահարաց տօնին։ Այդ տարուայ տօնն հանդիպելու էր Թշրիի 15-ին, մեր օրացոյցի համաձայն Երեքշաբթի, Հոկտեմբերի 11-ին (29-րդ թուակ), իսկ տօնի վերջին մեծ օրը (Յովհ. է. 37)՝ Հոկտեմբերի 19 կամ 20-ին՝ Յամենայն գէպս, 15-ին, շաբաթ օրը տօնի միջին օրն էր և հէնց այդ օրն էլ «եմնատ Յիսուս ի տաճարն եւ ուսուցանէր» (Յովհ. է. 14). Տաղաւարահարաց ու Նորոգման տօների միջոց-շնչանին են գալիս մի քանի անցքեր ու գործեր, որոնք առաջ է բերում Ղուկաս աւետարանից, օրինակ, «Եօթանասնից ընտրութիւնն ու նրանց իւր առջեւից Երկու-Երկու ղրկելն ամեն քաղաք ու զիւղ, ուր որ նրն ուզում էր զնալ (Փ. 1), Կափառնաումից հեռանալուց յետոյ, երբ արդէն ժողովուրդը նրանից խուսափում էր, իւր Երկրաւոր կեանքի վերջին կիսամեռակում Յիսուս այցելեց շատ քաղաքներ ու գիւղեր։ Ղուկաս աւետարանից Փ. ԺԱ. ԺԲ և ԺԳ գլուխներում նկարագրուած անցքերը, հաւանականօրէն աեղի ունեցել են 26-րդ տարու աշնանը Տաղաւար, տօնից մի քիչ առաջ եւ երբ արդէն մօտեցել էին նրա այս աշխարհից բաժանուելու օրերը, նա ցանկացաւ գնալ Երուսաղէմ (Ղուկ. Բ. 51):

Նորոգման տօնը, որի մասին գրում է Յովհ. աւետարանից (Փ. 22), կատարւում էր ութն օր շաբունակ, սկսեալ քիսլեի 25-ից (գեկտ. 19 20ից մինչ 27—28)։ Հոկտեմբերից մինչև ապրիլ տեղի ունեցած անցքերը նկարագրած են Ղուկաս և Յովհաննէս աւետարանիչները։

Այս տօներից յետոյ Յիսուս հեռանում է գէպի այսկոյ յԱրդանանու Երկրները։ 33-րդ թուականի առաջին ամիսներում կատարուած անցքերի մասին տեղեկութիւն-

ներ պակասում են: Յովհաննէս աւետարանչի Ա. գլխից տեղեկանում ենք, որ նա մի կարճ ժամանակ ապրում է Բեթանիայում, ապա գնալով Եփրոն կամ Եփրայիմ, Բեթէլի մօտ, որ Սամարիոյ Հրէաստանի սահմանի վրայ է, նա վերջին անգամ վերադառնում է Գալիլիա և հրաժեշտ տալով նրան, վերջնականապէս, տեղափոխում է Հրէաստան՝ Երիքովի վրայով (մէկդի թողնելով Պիրէի ճանապարհը), ուր տեղի է ունենում Զաքէոս մաքսաւորի հետ հանդիպելը, որից յետոյ դարձեալ այցելում է Բեթանիան: Ղազարու, Մարթայի ու Մարիամի տանը պատրաստուած ընթրիքը բաղարջակերաց տօնից վեց օր առաջ էր, այսինքն՝ 30-րդ թուականի ապրիլի 1-ին, շաբաթ Երեկոյեան (նիսանի 9-րդ օր):

Վրայ է համոնում այժմ այնպէս ճշտօրէն «Զարչարանաց» անուանող Եօթնեակը (շարաթը): Կիւրակէ օրը, ապրիլի 2-ին, կառարւում է նրա հանդիսաւոր մուտքը յերսւապէմ: Երեկոյեան Յիսուս կրկին վերադառնում է Բեթանիա՝ տաններկումների ուղեկցութեամբ (Մարկոսի Ժ. 11): Այդ օրը, նիսանի 10-ին, ըստ Մովսիսական օրինաց, ընտրում էր մի տարեկան անարատ գառը՝ նոյն ամսի 14-ին տաճարում զոհելու համար (Ելից Ժ. 3—6): Աչ մի փաստ չկայ պնդելու, որ այս անցքերից մինը կատարուեց երկուշաբթի, ապրիլի 3-ին, կամ՝ միւսը՝ 4-ին, կասկած չկայ սակայն, որ նա այդ օրերն անցկացնում էր տաճարում, իսկ երբ օրը լինում է տարաժամ (Մարկոսի Ժ. 11): Նա մեկնում էր Բեթանիա կամ՝ առանձնանում էր Զիթենեաց լերան մի անկիւնում: Ըստ Երեսյթին, այդ վերջին օրերում փոքր ինչ նախազգուշութիւն կարեւոր է համարել նա: «Զայս խօսեցաւ Յիսուս և չոդաւ թաղեաւի նոցանէ» (Յովհ. Ժ. 36), այսինքն նրան հարցնող ամբոխից: Մահից ազատուելու ձգտում՝ նա մտքիցն անգամ չէր անցկացնում, այս դէպքում՝ նա պիտի աճապարէր վերադառնալու Գալիլիա կամ մի ուրիշ հեռաւոր վայր, բայց և չէր ցանկանում շտապեցնել դրա կատարումը, յօժարութեամբ ինքնիրեն թշնամիներին յանձնելով:

Պէտք է ենթադրել, որ հէնց երեքշաբթի երեկոյեան, Զիթենեաց լերան բարձունքից գիտելով տաճարի ոսկեաճանչ տանկըն ու սրածայր գմբէթները, — որոնք մայր մոնող արևի վառվուուն ճառագայթների տակ սովորականից աւելի էին շողջողում, — նա առած պիտի լինի իւր նախագուշակ խօսքերն աշխարհի վերջի ու Երուսաղէմի կործանուելու մասին... ամբողջ չորեքշաբթի օրը նա ցանկացաւ անցկացնել Բեթանիայում՝ իւր սիրած ընտանիքի անդամների ու առաքեալների շրջանում։ Քայլերն ուղղելով գէպի այնտեղ (Բեթ.) Նա, ինչպէս առաց մի անդղիացի քարողիչ, — շրջապատռուած իւր աշակերտներով՝ գնում էր խորին լուսթեամբ, որը բարձր է ամենայն խօսակցութիւնից։ Լրացած լուսինը բարձրանում էր լերան եռելից, տարածելով իւր արծաթագոյն շողերը թալում կանաչների ու ձիթենաճիւղերի վրայ։ Երեկոյեան բաց-դեղնաւուն վերջալոյսը բոպէ-առ բուէ գունատուելով՝ տեղի էր տալիս գիշերային այդ համասփիուռ ճրագի աղծաթափայլ շողերին։ Այդ վայրկեանին այնպէս էլ գունատում էր նրա ուսուցչական կեանքի ցերեկը, տեղի տալով իշխանաքար մօտեցող մարտիրոսական ու ամպին ու աւազակի նախատական մահուան։

Հինգշաբթի, նիսանի 13 կամ 14-ը (30-րդ թուականի տարելի 6), նրա մարդկութեան արած կենսաքեր ծառայութեան վերջին օրն էր նա Պետրոսին ու Յովհաննէսին ուղարկում է Երուսաղէմ՝ զատկական գառը պատրաստելու։ Ուժանք ենթագրում են, որ այդ նպատակաւ ցոյց տրուած էր Յովաէփ Արեմաթացու կամ Մարկոս աւետարանչի տունը։ Կէս օրից յետոյ, երբ ինքն էլ եկաւ, այնտեղ արդէն ամեն ինչ պատրաստ էր։ Սուրբ Ընթրիքը արդեօք տմօի 13-ին կատարուեց թէ 14-ին, ըստ վերոյիշեալ պատճառի, մնում է անորոշ։ Մատթէոսի, Մարկոսի ու Ղուկասու աւետարանների բնագրից հետեւում է, որ պէտք է գերադասել 14-ը։ Այն ժամանակ կարող են կարծել, որ մահուան պատիմը կատարուած է եղել հէնց 15-ին, այսինքն տօնի ամենամեծ օրը։ Մի այդպիսի հանդիսաւոր օր

մահուան դատավճիռ կատարելը մտքից անգամ չէր կարելի անցկացնել։ Իսկ եթէ Յովհաննէս աւետարանչի ցուցման համեմատ ճշտագոյնն ընդունելու լինենք 13-րդ թիւը, — որի հետ համաձայն են և Տալմուդի սարբողները, — այսուեղ էլ յանգում ենք մի ուրիշ՝ չը պարզաբանուած կատածանքի, այս դէպքում Յիսուսեան Պատեքը կատարուած պիտի համարել հրէականից 24 ժամ առաջ՝ Յիսուսի, քրիստոնէական Զատիկը հինուիստի Պատեքից առաջ կատարելը լիովին հնարաւոր մի ենթագրութիւն է, բայց սովորական ժամանակից առաջ դրա պատրաստելը երկու աշակերտների ձեռքով՝ բոլորովին անկարելի է այն պատճառաառ, որ Զատիկի համար անհրաժեշտ գառան զենումը տաճարի մէջ, ամսի 13-ին, 24 ժամ առաջ, քան աւրող ժողովրդի համար օրէնքով կարգադրուած ժամանակը, այնպիսի մի սրբապղծութիւն էր, որին քահանան երրէք չէր համաձայնիլ, Ուրեմն այդ դիլեմայից դուրս է դալիս այն աւելի հնարաւոր ելքը, թէ Յիսուս խաչուած է եղել նիսանի 15-ին (ապրիլի 7), բաղարջակերաց տօնի առաջին օրը։ Աշք առաջ ունենալով այն սաստիկ լարուած դրութիւնը, երբ նրա թշնամիների կատաղութիւնն ու կուրութիւնը իրենց գագաթնակէտին էին հասած, այս վերջին եղբակացութիւնն աւելի հնարաւոր է դառնում, քան թէ տաճարի մէջ, հրապարակաւ Մովսիսական օրէնքների խանդարումը։

Հաղորդութեան սուրբ խորհուրդը կարգելուց յետոյ տեղի է ունենում աշակերտների հետ վերջին խօսակցութիւնը, որ կարգացում է Յովհաննու ԺԴ, ԺԵ, ԺԶ և ԺԷ-ՐԴ գլուխներում։ Նրանց ուղեկցութեամբ, կէս-գիշերի ժօտ, դիմելով դէպի Աշխարաց գուռնը, և իջնելով Կեղարոնինեան հեղեղատի վրայ, կանգնում է Զիթենեաց լերան ստորոտում։ Այստեղ, Գեթսեմանի պարտիզում, նա ենթարկւում է մարտիրոսական խորին վշտերի ու հոգեկան ծանր տանջանքների, որից առաջանում է այն գերբնական երեսյթը, ինչպիսին է արիւնախառն քրտանց հոսելը Նրա դալիացած դէմքի վրայից... Մի քանի րոպէ ևս, և նա—թշնամիների ձեռքումն է ... Նրան տանում են նախկին

քահանայապետ Աննայի մօտ, որի այդ տիտղոսն անուանական էր միայն, նրա ապարանքն այնտեղից ոչ հեռու, ըլլի վրայ է։ Այնտեղից տանում են Նրան Կայիփայի մօտ, որ այդ տարուայ քահանայապետն էր։ Գիշերով սինէդրիօնում կազմւում ու հաստատում է դատավճիռը, իսկ ուրբաթ օր, ապրիլի 7-ին, առաւօտուն կանուխ նագոնում է Պիղատոսի մօտ, կառավարչապետի «քարայատակ» գահինիօնում։ Այս հաստատութիւնը գտնւում էր Անտօնիոսի աշտարակի մօտերքը, որի հիմքերի մնացորդները մինչև այսօր էլ երեսում են։ Ապա տանում են Նրան Հերովդէս Անտիպալասի մօտ, որ ըստ սովորութեան եկած էր երուսաղէմ։ Հրէից տօնին և ապրում էր, ըստ երեսոյթին, Կեսարականում կամ Ագրիպպականում, որ Հերովդէս մեծի կառուցած ամենաշքեղ պալատներից մէկն էր։ Հասնում է ժամը, երբ գործադրուելու էր սինէդրիօնի արձակած հակամարդկային դատավճիռը...։ Խաչը ուսին բարձած՝ Նրան տանում են քաղաքի պարիսպներից դուրս, դէպի հիւսիս-արևմուտք։ Այստեղ, ոչ-հեռու հին քաղաքի պարիսպներից, — որ շինել տուած էին եղբասն ու նէեմիան՝ Բաքելոնի գերութիւնից վերագաւնալուց յետոյ, — դրանց գէմ-յանդիման գտնւում է դանկի նման լերկ մի վորքիկ ըլուր կամ քարակոյտ՝ պարտէզներով շրջապատուած, որոնց մէջ էր և Յովսէփ Արևմտթացու պարտէզը՝ իւր ընտանեկան քարէ դամբարանով հանդերձ։ Ահա այս ըլլի վրայ վախճան ստացաւ Նրա երկրաւոր կեանքը։ Խաչուելով առաւօտեան ժամի իննին, նա հոգին աւանդում է կէսօրից յետոյ ժամի երեքին։ Երեկոյեան վեց ժամին խաչի վրայից իջեցրած է Ամենամաքուր Մարմինը ու դրուած վերոյիշեալ հանգստարանի մէջ։

Դրանից յետոյ կատարուած աւետարանական մնացեալ անցքերը որոշւում են առանց դժուարութեան, այսպէս։ Քրիստոսի Յարութիւնը գալիս է (30-րդ թուակ.) ապրիլի 9-ին։ Համբարձումը — մայիսի 18-ին, իսկ քրիստոնէական առաջին Պէնտէկոստէն (հոգեգալուսուը) — մայիսի 28-ին։

Թափիր Նիկողայոս Թաւրիան

Նոր-Նախիջեւան, 14 մարտի 1906 ամի: